# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

Հավարտ Ս. Պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ 1988 թ. երկրաշարժի զոհերի, ինչպես նաև նորոգ հանգուցյալներ Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազյանի և Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հոգիների հանգստության համար:

«Այսօր դեկտեմբերի 7-ն է... Մեր հայացքի առջև վերապատկերվում են ահավոր տեսարանները ողբերգական այդ օրվա, և մեր հոգին վերապրում է տրտմությունն ու ցավը: Սակայն մեր այդ փխրությանը, մեր վշտին ավելանում է մի նոր ցավ: Անցած շաբաթ մեր Եկեղեցին երկու հավատարիմ և արժանավոր հոգևորականների կորցրեց՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության երկու միաբանների՝ Սահակ արքեպս. Այվազյանին և Մեսրոպ արքեպս. Աշճյանին:

Վերջին տարիներին մենք ավելի մոտիկից ճանաչելու հնարավորություն ենք ունեցել Մեսրոպ Սրբազանին: Նա երջանկահիշատակ մեր նախորդի կողմից հրավիրվեց Մայր Աթոռ՝ իր օգտակարությունը և ծառայությունը բերելու Ս. Էջմիածնին: Սրբազանն ընդամենը մի քանի տարվա ընթացքում հասցրեց գրո արժանի բազում գործեր, աշխատանքներ իրականացնել ու իրագործել: Անհանգիստ էր իր բնավորությամբ, ստեղծագործելու իր տարերքի մեջ, փնտրում էր միշտ նորը, որը պիտի ուրախացներ ժողովրդին, որը պիտի զորացներ Հայրենիքն ու Եկեղեցին»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*